



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 03/20**

20.02.2020թ.

ք. Երևան

Քաղաքացիներ Անահիտ Մակարյանը և Էդվարդ Տոնյանը (ներկայացուցիչներ՝ Միքայել Դանիելյան, Մամիկոն Մանուկյան, այսուհետ՝ Դիմող) 20.09.2019թ. դիմել են ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին:

Դիմողի պնդմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության ի սկզբանե հռչակված ու մինչ օրս անփոփոխ թողնված օրինականության սկզբունքը՝ օրենսդիրը «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել է, որ Օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ իրականացված բոլոր աճուրդներն անվավեր են՝ դրանից չնախատեսելով և ոչ մի բացառություն: Այսինքն՝ օրինականության սկզբունքին այդ կարգավորմամբ բացարձակ գերակայություն է շնորհվել՝ կատարելապես անտեսելով իրավական այլ սկզբունքներն ու սահմանադրորեն երաշխավորված հիմնական իրավունքները:

Մինչդեռ, Դիմողի գնահատմամբ՝ օրինականության սկզբունքին բացարձակ գերակայություն տվող և օրենքի խախտմամբ իրականացված հարկադիր բոլոր աճուրդներն անվավերության ենթակա համարող «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին:

Արձանագրելով, որ դիմողներից Է. Տոնյանը՝ որպես բարեխիղճ ձեռքբերող, որպես պետության իրականացրած գործընթացներին վստահելու իրավունք ունեցող անձ, հրապարակային սակարկությունների արդյունքում ձեռք է բերել բնակարան, հետո այն վաճառել է դիմողներից Ա. Մակարյանին, որն էլ, իր հերթին, կատարել է բնակարանի վերանորոգում, ինչի արդյունքում բնակարանի գինն էականորեն ավելացել է, Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմում առկա է օրենսդրական բաց:

Ըստ Դիմողի՝ օրենսդրական բացը տվյալ դեպքում դրսևորվում է նրանում, որ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը չի նախատեսում նույն օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ իրականացված հարկադիր աճուրդն անվավեր լինելու կանոնից որևէ բացառություն, մասնավորապես, այն դեպքերի համար, երբ աճուրդի հաղթողն ունի վստահության պաշտպանության իրավունք: Նշված

օրենսդրական բացը, Դիմողի կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 79-րդ հոդվածներին և խախտում է իրենց սեփականության սահմանադրական իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ աճուրդն Օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ իրականացված լինելն իրավական պետությունում միշտ չէ, որ կարող է հանգեցնել կամ պետք է հանգեցնի դրա անվավերությանը, քանի որ նմանատիպ դեպքերում օրինականության սկզբունքը երբեմն առերեսվում և հակադրվում է իրավական այլ սկզբունքների հետ, և այդպիսի դեպքերում դատարանը կամ վեճը քննող այլ մարմինը պետք է քննարկեն այն հարցը նաև, թե տվյալ կոնկրետ դեպքում իրավական որ սկզբունքով պաշտպանվող շահն է գերակայում մյուսի նկատմամբ: Այսինքն՝ հարկադիր աճուրդի անվավերության հարցի քննությամբ դրա՝ Օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ ընդունված լինելը հաստատվելու դեպքում անգամ հարկադիր աճուրդն ինքնըստինքյան (մեխանիկորեն, միայն դրա հիմքով), ըստ Դիմողի, չպետք է անվավեր ճանաչվի առնվազն այն դեպքերում, երբ դրա անվավերությունը շոշափում է բարեխիղճ երրորդ անձանց հիմնական իրավունքները և/կամ ազատությունները, ովքեր գործել են ելնելով պետության իրականացրած աճուրդի հանդեպ իրենց տաժած պաշտպանության արժանի վստահությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող իրավակարգավորման՝ մասնավորապես, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

3. Սույն օրենքի 30-33-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը, շահագրգիռ անձի պահանջով, դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Հարկադիր աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում կազմակերպվում է նոր հարկադիր աճուրդ՝ սույն օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-ից 33-րդ հոդվածները, ըստ էության, կարգավորում են հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման կարգը՝ հետևյալ վերտառությունն ունեցող դրույթներով.

Հոդված 30՝ Լոտի գնահատումը,

Հոդված 31՝ Հարկադիր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը,

Հոդված 32՝ Հարկադիր աճուրդի կազմակերպումը,

Հոդված 33՝ Հարկադիր աճուրդի ընթացքը:

Վիճարկվող դրույթի սահմանադրականությունն անհրաժեշտ է գնահատել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Ինչպես արդեն նշել ենք ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի կողմից մի շարք սահմանադրական վեճերով տրված կարծիքներում, ՀՀ Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, որն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության (2015թ. խմբ.) 1-ին և 79-րդ հոդվածներում:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

2011թ. նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է. «2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (*Busuioc v. Moldova*) վճռում, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ **անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:** Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պարզի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ, **անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան:** Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները»:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1265, 19 ապրիլի 2016թ. որոշման համաձայն՝ «ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Եվրոպական դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «նորմը չի կարող համարվել «օրենք» քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար

որոշակիությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տա կարգավորել իր վարքագիծը: Նա պետք է ի վիճակի լինի, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի օգնությամբ, այդ հանգամանքներում ողջամիտ աստիճանի կանխատեսել այն հետևանքները, որոնց նշված գործողությունը կարող է հանգեցնել» (CASE OF MICHAUD v. FRANCE (Application no. 12323/11))»:

Կամ, ՍԴՈ-1270, 3 մայիսի 2016թ. որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման մեջ սահմանադրական դատարանը նշել է.

«7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝** հստակ են, կանխատեսելի, մատչելի:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով...»:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1176 և ՍԴՈ-1213 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ «... իրավական որոշակիության ապահովման փաստակցությունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն փարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Սույն սահմանադրական գործի շրջանակներում, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված վերոնշյալ դիրքորոշումները համադրելով գործի հանգամանքների հետ՝ գտնում ենք, վիճարկվող՝ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանելու տեսանկյունից խնդրահարույց չէ:

Բանն այն է, որ վիճարկվող դրույթը սահմանում է այն իրավական հետևանքը, որը կարող է վրա հասնել (այլ ոչ թե պարտադիր վրա է հասնում) հրապարակային սակարկությունների անցկացման կարգը խախտելու արդյունքում՝ որպես այդպիսի իրավական հետևանք նախատեսելով դատարանի կողմից շահագրգիռ անձի պահանջով **աճուրդն անվավեր ճանաչելու հավանականությունը (հնարավորությունը):**

Այսինքն՝ այսպիսի իրավական կարգավորումն օրենքի հասցեատերերի համար կանխատեսելի է դարձնում իրենց իրավաչափ սպասելիքներն այնքանով, որքանով վերջիններիս համար հստակ է, որ աճուրդի անցկացման կարգի՝ մասնավորապես «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 30-33-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված հարկադիր աճուրդը շահագրգիռ անձի պահանջով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Հետևաբար, իրավաչափ սպասելիքների անկանխատեսելիության առումով վիճարկվող դրույթի իրավական որոշակիությունը, կարծում ենք, կասկած չի հարուցում:

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ վիճարկվող դրույթում օրենսդիրը «օրինականության» սկզբունքը գերակա է համարել «վստահության պաշտպանության» սկզբունքի համեմատությամբ, կարծում ենք, նույնպես հիմնավոր չէ:

Բանն այն է, որ վիճարկվող դրույթում օրենսդիրը սահմանել է աճուրդն անվավեր ճանաչելու ոչ թե իմպերատիվ պահանջ, այլ այդպիսի իրավական հետևանքի վրա հասնելու իրավական հնարավորություն:

Ըստ վիճարկվող իրավակարգավորման ձևակերպման՝ հարկադիր աճուրդն Օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ անցկացնելու դեպքում դատարանի կողմից այն *կարող է* անվավեր ճանաչվել: Սա նշանակում է, որ հարկադիր աճուրդն Օրենքի նշված դրույթների խախտմամբ անցկացնելու դեպքում դատարանի կողմից կարող է և անվավեր չճանաչվել՝ չնայած որ աճուրդի անցկացման ընթացքում խախտվել են օրենքի 30-ից 33-րդ հոդվածների իրավակարգավորումները:

Այսինքն՝ վիճարկվող դրույթում սահմանված է դատարանի **հայեցողական լիազորությունն** աճուրդն անվավեր ճանաչելու հարցում: Նշանակում է, բացի օրինականության սկզբունքի պահպանված լինելու հանգամանքը հաշվի առնելուց, համաձայն օրենսդրական վիճարկվող կարգավորման, դատարանը հետազոտում և գնահատում է նաև այլ, այդ թվում նաև՝ «վստահության պաշտպանության» սկզբունքի պահպանման հանգամանքը, որոնց գնահատման արդյունքում էլ կարող է որոշում կայացնել աճուրդն անվավեր ճանաչելու մասին կամ մերժել աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջը:

Ավելին, խնդրո առարկա օրենսդրական դրույթի ձևակերպումից հետևում է, որ դատարանը Օրենքի 30-ից 33-րդ հոդվածների խախտմանը անցկացված աճուրդը **պարտավոր չէ** անվավեր ճանաչել: Ըստ նորմի տրամաբանության՝ դատարանն արձանագրելով Օրենքի 30-ից 33-րդ հոդվածների խախտմանը անցկացված լինելը՝ լրագրված է մերժել աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջը:

Հետևաբար, Դիմողի այն պնդումը, որ վիճարկվող դրույթը սահմանել է, որ Օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ իրականացված բոլոր աճուրդներն անվավեր են՝ դրանից առանց որևէ բացառության, հիմնավոր չէ:

Այսպիսով, գտնում ենք, որ վիճարկվող դրույթում մեջբերված հոդվածների խախտումը մեխանիկորեն չի հանգեցնում աճուրդն անվավեր ճանաչելու, և դատարանն այդ հարցում օժտված է հայեցողական լիազորությամբ քննարկվող խախտումների հիմքով աճուրդն անվավեր ճանաչելու մասին որոշում կայացնելիս: Ընդ որում, իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանելուց զատ՝ վիճարկվող դրույթում օրենսդրական բաց առկա չէ, որը կարող է հանգեցնել սահմանադրությամբ սահմանված որևէ հիմնական իրավունքի խախտման:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ Դիմողի՝ օրենսդրական բացը տվյալ դեպքում դրսևորվում է նրանում, որ Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը չի նախատեսում նույն օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ իրականացված հարկադիր աճուրդն անվավեր լինելու կանոնից որևէ բացառություն, մասնավորապես, այն դեպքերի համար, երբ աճուրդի հաղթողն ունի վստահության պաշտպանության իրավունք:

Դիմողի այս պնդումը հիմնավոր չէ, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, Օրենքի 30-33-րդ հոդվածների խախտմամբ աճուրդն անվավեր ճանաչելը դատարանի ոչ թե պարտականությունն է, այլ՝ հայեցողությունը: Այսինքն, ելնելով գործի հանգամանքներից, դատարանը կարող է օգտվել կամ չօգտվել իր այս հայեցողական լիազորությունից: Հետևաբար, վիճարկվող դրույթում հարկադիր աճուրդն անվավեր ճանաչելու կանոնից բացառություն նախատեսելն այն դեպքերի համար, երբ աճուրդի հաղթողն ունի վստահության պաշտպանության իրավունք, առարկայազուրկ է, քանի որ առանց այդ բացառությունների էլ, ըստ վիճարկվող դրույթի տրամաբանության՝ բոլոր դեպքերում չէ, որ աճուրդն անվավեր է ճանաչվում այն անցկացնելու դրույթների խախտման հիմքով, այլ դատարանն իր հայեցողական լիազորության ուժով ինքն է որոշում այդ կանոնից բացառությունները: Պարզ ասած՝ վիճարկվող դրույթում բացառություններ նախատեսված չլինելու ձևով օրենսդրական բաց առկա չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց չէ:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան